Միգրացիոն տվյալների հավաքագրման բարելավման գործողությունների պլան

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

CRRC Armenia

N	Հիմնախնդիրներ	Հիմնախնդրի նկարագրություն	Պատճառ	Լուծում/քայլ	Ցուցանիշներ	Վերջնարդյունք	Հասցեատեր/եր
Վարչական տվյալների հավաքագրման բարելավում							
1.	Տվյալների ոչ լիարժեք թվայնացում	Ոչ բոլոր հավաքագրվող տվյալներն են թվայնացված, դրանք մասամբ հասանելի են միայն թղթային ձևաչափով:	Տվյալների մուտքագրման և թվայնացման կարիքի թերարժևորում: Տվյալների մուտքագրումը, թվայնացումը որպես գործառույթ չի իրականացվում որևէ մասնագետ(ներ)ի կողմից:	Տվյալների մուտքագրման գործընթացի պարտադիր թվայնացում բոլոր օղակներում հավաքագրման համար համապատասխան ծրագրային լուծման մշակմամբ:	Թվայնացված տվյալադարաններ: Միգրացիոն տվյալների մուտքագրման էլեկտրոնային համակարգ:	Ամբողջական և ստուգված տվյալներ; տվյալների հավաքագրման տրանզակցիոն ծախքերի նվազեցում; տվյալների հավաքագրման ճշգրտության աճ; տվյալների համախմբի վերլուծական ներուժի բարձրացում, այդ տվյալները կիսելու հնարավորու-թյան ստեղծում: Հավելյալ արդյունք. տվյալների հավաքագրման շեղման և ժամանակային ծախսերի կրճատում:	Վիճակագրական կոմիտե Ազգային անվտանգության ծառայություն Ներքին գործերի նախարարություն

2.	Տվյալների անհասանելիություն	Առկա են վարչական ռեգիստրներում (մասնավորապես ՍԵԿՏ) տվյալներ, որոնք հասանելի չեն որպես վիճակագրական անանունացված տվյալներ:	Խնդիրները տեխնիկական են, քանի որ տվյալների շտեմարանները հարմարեցված չեն վիճակագրական հաշվետվություն-ներ գեներացնելուն և տրամադրելուն:	Շարունակել համագործակցու-թյունը վարչական ռեգիստրների հիման վրա բնակչու-թյան ռեգիստրի տվյալների որակի բարելավման ուղղությամբ՝ պահպանելով անձնական տվյալների անվտանգության պահանջները:	Բնակչության պետական ռեգիստրի իրական ժամանակում թարմացվող տվյալադարան, որը նաև շուրջօրյա հասանելի կլինի շահառու գերատեսչություն-ներին:	Բնակչության պետական ռեգիստրի տվյալների ժամանակին թարմացում:	Ազգային անվտանգության ծառայություն Ներքին գործերի նախարարություն:
		Տվյալների հավաքագրման աղբյուրները տարբեր են:	Խնդիրը մասամբ տեխնիկական է (ինչպես նախորդ խնդրի պարագայում), մասամբ իրավական, քանի որ ենթադրում է անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքի դրույթների կիրառում և հուշագրերի կնքում պետական կառույցների միջև:	Տվյալների կենտրոնացված, բոլոր շահառու պետական կառույցներին հասանելի հարթակի ստեղծում:	Միասնական հարթակ՝ ընդհանուր տվյալադարան բոլոր շահառու կառույցների համար:	Տվյալների ներդաշնակեցում՝ ըստ աղբյուրների: Հավելյալ արդյունք. տվյալներ ստանալու նպատակով տրանզակցիոն ծախքերի կրճատում:	Ազգային անվտանգության ծառայություն Ներքին գործերի նախարարություն
3.	Միգրանտներին վերաբերող ոչ ամբողջական տվյալներ	Գրանցվում են միայն բնակչության սահմանահա-տումների մասին տվյալները, սակայն նրանց նպատակների վերաբերյալ, ինպես նաև կրթական և այլ անհրաժեշտ ցուցիչներ տարբեր պատճառներով չեն հավաքագրվում:	Քաղաքականու-թյուն մշակող կամ տվյալներ հավաքագրող կառույցների նպատակների շրջանակի սահմանափակու-թյուն: Միգրացիայի հետ կապված ոչ հստակ ռազմավարական խնդիրները:	Հարաբերակա-նորեն ամբողջական տվյալներ ունենալու ուղղությամբ օպտիմալ լուծումների փնտրտուք: Միգրանտների նկատմամբ վարվող քաղաքականության ռազմավարության հստակեցում:	Օգտակար միջազգային փորձառությունների հաշվառում: Ռազմավարու-թյան շուրջ բոլոր շահառու հիմնական դերակատարների հետ քննարկումներ:	Միգրանտներին վերաբերող առավել ամբողջական տվյալներ: Արտագնա միգրանտների մասին ճշգրտված տվյալներ՝ ի հավելումն վարչական և հետազոտական աղբյուրների:	Ազգային անվտանգության ծառայություն Ներքին գործերի նախարարություն

		Միգրանտ ուղարկող և ընդունող գործընկեր երկրների հետ տվյալների ստուգում	Գործընկեր երկրների միջև տվյալների փոխանակումը չի կրում պարբերական բնույթ, կան երկրներ, որոնց հետ տվյալների հավաքագրման մանրամասնությունը տարբերվում է (տեղաշարժի մոտիվացիան, ամուսնական կարգավիճակը և այլ լրացուցիչ տվյալներ), ըստ ինչի տվյալները համեմատելի, համադրելի չեն:	Էմիգրացիայի բոլոր հիմնական ուղղություններով երկկողմանի պայմանագրերի մշակում՝ միգրացիոն հոսքերը վերահսկելու և տվյալները հստակեցնելու նպատակով	Միջպետական պայմանագրերի քանակ	Արտագնա միգրանտների մասին ճշգրտված տվյալներ՝ ի հավելումն վարչական և հետազոտական աղբյուրների:	Ներքին գործերի նախարարություն
4.	Համապարփակ և համակողմանի վիճակագրության բացակայություն	Վիճակագրությունը հավաքագրվում է տարբեր հաստատությունների կողմից՝ տարբեր մոտեցումների և տեղեկատվության աղբյուրների հիման վրա:	Երկխոսության, փոխհամաձայնության պակաս:	Շահառու կառույցների համար մշտական պարբերականությամբ գործող քննարկման հարթակի ստեղծում:	Շահառու կառույցների կողմից իրականացված պարբերական քննարկումներ:	Համատեղ որոշումների հիման վրա ստեղծված, համադրված, հրապարակված տվյալադարաններ/նյութեր: Հստակ պարբերականությամբ, օրինակ տարեկան 2 անգամ, կայանալիք շահառու կառույցների համաժողով:	Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) Ներքին գործերի նախարարություն Վիճակագրական կոմիտե
5.	Պետական կառույցների կողմից հրապարակվող տվյալների խրթինություն	Միգրացիայով հետաքրքրված փորձագետները դժգոհ են միգրացիայի վերաբերյալ տվյալներ տրամադրող պատկան կառույցների կողմից հրապարակվող տվյալների անհասկանալի և	Պետական կառույցների աշխատակիցների կողմից հետազոտության գործնական կիրառելիության թերարժևորում, ինչը թույլ չի տալիս տվյալների հրապարակումը ավելի կիրառական դարձնել օգտագործողների համար:	Պետական կառույցների աշխատակիցների՝ տվյալահեն քաղաքականության որոշումներում իրենց տրամադրած տվյալների կարևորության մասին կարողությունների բարձրացում:	Համապատասխան ջատագովության իրականացում: Դասընթացների կազմակերպում, անհրաժեշտ մեթոդների հետ ծանոթացում: Համապատասխան անձնակազմի համար միգրացիոն	Պետական կառույցների կողմից հրապարակվող բաց տվյալներ, այդ տվյալների համակարգվածություն, տվյալների դյուրին նույնականացում և մեքենայական ընթերցելիություն:	Վիճակագրական կոմիտե Ներքին գործերի նախարարություն

		դժվար մեկնաբանելի լինելուց	Պետական կառույցների կողմից տվյալների ոչ համակարգված ներկայացում:	Հետազոտությանը տվյալներ տարամադրելու անուղղակի խթանում: Պետական կառույցների աշխատակիցների գիտելիքների ու կարողությունների զարգացում՝ տվյալների համակարգման կարողությունների զարգացում:	գործընթացների և միգրացիոն տվյալների հավաքագրման նորարարական լուծումների վերաբերյալ պարբերական դասընթացների անցկացում: Հետազոտական համայնքի/ կազմակերպությունների, ակադեմիական հաստատությունների կողմից պետական կառույցների հետ համագործակցություն՝ միտված վերջիններս կողմից հրատարակած տվյալների դյուրինությանը:	Տվյալների հետ աշխատանքում արդիական գիտելիքներով և հմտություններով զինված անձնակազմի ավելացում:	
6.	Տվյալների սահմանման մեթոդաբանական անհամադրելիություն	Միգրացիայի սահմանումների և չափման մակարդակների մեթոդաբանական տարբերություններ	Տարբեր պաշտոնական ուսումնասիրություններում միգրացիայի սահմանումների տարբերությունների չափման համադրելիության դժվարություն	Միգրացիայի սահմանումների և չափման մակարդակների մեթոդաբանական համապատասխանեցում	Տվյալների սահմանման ընդհանուր արձանագրություն՝ միգրացիայի կոդավորման գրքույքի հրատարակում:	Միգրացիոն տվյալների ճշգրիտ, համադրելի և արդիական մեթոդներով հավաքագրում: Միգրացիայի վերաբերյալ տվյալների վերակոդավորման, վիճակագրական չափման համադրելիության, այլ հետազոտությունների հետ համադրման հնարավորությունների ընդգծման մեթոդաբանական ուղեցույցի ստեղծում:	Վիճակագրական կոմիտե Ներքին գործերի նախարարություն

7.	Հետազոտու-թյան արդյունքների հրապարակման ուշացումներ	Վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող տվյալների ոչ օպերատիվ ներկայացում:	Միջազգային ստանդարտներին համապատասխան հրապարակումների ժամանակացույց: Օպերատիվ տվյալների հավաքագրման և հրապարակման համար սահմանափակ ռեսուրսներ:	Քաղաքականության մշակման համար հրատապ տվյալների հարապարակման համար լրացուցիչ ռեսուրսների հատկացում: Տվյալների ժամանակին օգտագործում և պետական կառույցների կողմից տվյալահեն որոշումների մշակույթի խթանում:	Օպերատիվ և վերջնական տվյալների հրապարակման հստակ և ողջամիտ ժամանակացույց:	Ողջամիտ ժամանակա-միջոցում հրապարակված տվյալներ:	Վիճակագրական կոմիտե
Հետազոտական աղբյուրներից ստացվող տվյալներ							
8.	Ոչ պարբերական հետազոտու-թյուններ	Որոշ հետազոտություն-ներ անցկացվում են դոնորների հետաքրքրություն-ների շրջանակում կամ ըստ պետական կառույցների նպատակահար-մարության: Մեկանգամյա հետազոտություն-ների քանակը շատ ավելին է, քան պանելային, լոնգիտուդային հետազոտություն-ներինը:	Հետազոտության համապարփակ նախագծի բացակայություն: Երկարաժամկետ ֆինանսավորման պակաս:	Միգրացիայի վերաբերյալ առանձին հետազոտության նախագծում և իրականացում:	Միգրացիայի լոնգիտուդային հետազոտության հաստատված նախագիծ:	Միգրացիայի համապարփակ, պաշտոնական, պարբերական հետազոտության իրականացում Հայաստանում:	Վիճակագրական կոմիտե Ներքին գործերի նախարարություն Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
		Հետազոտական նախաձեռնություն-ների կետային բնույթը, անհամա-դրելիությունը, մեկտեղված չլինելը:	Նյութերի մեկտեղման նախաձեռնության բացակայություն, թերի շրջանառություն:	Տվյալների հավաքագրման և կառավարման ռազմավարության մշակում:	Միգրացիային վերաբերով հետազոտություն-ների, միկրոտվյալ-ների մեկտեղում արդեն առկա հարթակներում: ՀՀ-ում հասանելի միգրացիոն	Տվյալների հավա-քագրման և կառա-վարման մշակված ռազմավարութուն, ինչի արդյունքում կդրվի տվյալների կենտրոնացված և կանոնակարգված հավաքագրման գործընթաց:	ԵՊՀ միգրացիոն ուսումնասիրու-թյունների կետրոն Հայ-ռուսական համալսարան

					հետազոտություն-ների մասին տեղեկատվու-թյունը մեկտեղող էլեկտրոնային էջի ստեղծում:		
9.	Տվյալների հավաքագրման մեթոդաբանական թերություններ	Միգրացիայի հարցերով հետազոտություն-ների իրականացնող անկախ կազմակերպություն-ների ու փորձագետների կողմից հետազոտու-թյան մեթոդաբանու-թյան ոչ հստակ ներկայացում, ինչպես նաև հետզոտության սահմանափակում-ների մասին ոչ պատշաճ տեղեկացում:	Միգրացիայի երևույթի սահմանման և չափման ընդունված, համաձայնեցված մոտեցումների բացակայություն: Տվյալները ներկայացնելու վերաբերյալ ոչ բավարար գիտելիքներ ու կարողություններ:	Մասնագիտական փոխհամաձայ-նեցված մոտեցման խթանում: Հետաքրքրված և միգրացիայով պարբերաբար զբաղվող փորձագետների մասնագիտական գիտելիքների ու կարողությունների զարգացում:	Համապատասխան ջատագովու-թյանն ուղղված միջոցառումներ Հատուկ ֆոկուսավորված և մասնագիտացված դասընթացների կազմակերպում և անհրաժեշտ մեթոդների հետ ծանոթացում: Ոլորտի ուսումնաիսրու-թյուններ իրականացնողների հետ միգրացիոն ակադեմիական փորձը կոմունիկացնող դասընթացներ:	Մեթոդաբանորեն հիմնավորված տվյալներ Երկրորդային վերլուծությունների, արդեն առկա տվյալների, վերլուծություններ Երևույթի ուսումնասիրության մասնագիտացված կարողունակ կենտրոններ:	Միգրացիայի ուսումասիրություն-ներ իրականացնող փորձագետներ, ակադեմիական խմբեր և հաստատություն-ներ: Օրինակ, ԵՊՀ միգրացիոն ուսումնասիրու-թյունների կետրոն, Հայ-ռուսական սլավոնական համալսարան և այլն:
10.	Հետազոտություն-ների թեմատիկ շրջանակի անհստակություն	Թեմայի վերաբերյալ հետազոտություն-ները երբեմն կրկնում են իրար Միգրացիայի նույն ասպեկտը մի քանի հ/կ-ների կողմից է ուսումնասիրվում, իսկ այլ ասպեկտներ ուշադրությունից դուրս են մնում	Պետությունը հազվադեպ է ֆինանսավորում թեմայով հետազո-տությունները: Դրամաշնորհներին դիմող հ/կ-ների միջև զգալի մրցակցության պատճառով հետազոտության առաջարկվող մեթոդաբանու-թյունները երբեմն դժվար է ինստիտուցիոնա-լացնել:	Պետության և ֆինանսավորող կազմերպություն-ների համագործակցու-թյան սերտացում:	Ֆինանսավորող կազմերպություն-ների կողմից հետա-զոտություն սկսելուց առաջ դաշտում իրա-կանացվող հետա-զոտությունների հետ ծանոթացում: Միասնական հարթակի առկայություն, որտեղ կարտացոլվեն միգրացիայի վերաբերյալ բոլոր ավարտված և ընթացիկ հետա-զոտությունները:	Հետազոտություն-ների դաշտի թեմաների համակարգում: Հավելյալ արդյունք. ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Տվյալների պարբերականու-թյան ապահովում:	Ներքին գործերի նախարարություն Միջազգային/ տեղական կազմակերպություն-ներ

			Հետազոտական մոտեցումը շատ դեպքերում առաջարկվում է ֆինանսավորող միջազգային/ տեղական կազմակերպության կողմից, այլ ոչ հետազոտող կազմակերպության:				
11.	Դժվար համադրելի կամ անհամադրելի տվյալներ	Տարբեր հետազոտական միավորների կողմից կիրառվող հետազոտական մեթոդաբանական համադրելիության սահմանափակություն	Մեկ միասնական մոտեցման բացակայության պատճառով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և պետության միջև հետազոտությունների չհամաձայնեցված լինելու հետևանքով հետազոտական կազմակերպությունների ինքնավար, չհամակարգված գործունեություն:	Տվյալների հավաքման գործընթացի և հավաքագրող ինստիտուտների կենտրոնացում: Հետազոտական մոտեցումների / մեթոդաբանության/ հասկացությունների ստանդարտացում Շահառու այլ կառույցների հետ մշտական պարբերականությամբ գործող քննարկման հարթակի ստեղծում: Համագործակցության հուշագրերի կնքում: Միգրացիայի ոլորտի մասնագետներ կարողությունների զարգացում:	Օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ: Պետական քաղաքականության կարիքներին համապատասխան մեթոդաբանական ընդհանուր հիմունքներ: Համապարփակ մեթոդաբանության և հասկացություններ: Տարեկան 2 անգամ կայանալիք շահառու կառույցների համաժողով: Հանդիպումների տարեկան քանակ: Հուշագրերի քանակ: Ժողովրդագրության ոլորտում կարողությունների զարգացում՝ մասնագետների պատրաստման և մեթոդաբանական վերապատրաստման ծրագրերի մշակում և պարբերական իրականացում:	Տվյալների հավաքման կենտրոնացված համակարգի և հավաքագրման կենտրոնի առկայություն Համադրելի մեթոդաբանություն և ստանդարտացված հասկացություններ: Տվյալների հավաքագրման մեթոդաբանության ընդհանուր արձանագրություն: Համադրելի հետազոտական տվյալներ: Միգրացիայի ոլորտում իրականացվող հետազոտությունների համար խորացված տեսական և մեթոդաբանական գիտելիքներին տիրապետող անհրաժեշտ քանակով մասնագետներ:	Վիճակագրական կոմիտե Ներքին գործերի նախարարություն Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

12.	Տվյալների օգտագործման անճշտություններ	Զբոսաշրջիկների և անձնական նպատակներով հոսքերը ներկայացվում են որպես ներգաղթ և արտագաղթ՝ ըստ նպատակահարմարության	Սահմանահատումների և սահմանահատողների ոչ հստակ դիվերսիֆիկացում:	Սահմանահատումների դիվերսիֆիկացիայի կոնցեպտի մշակում:	Սահմանահատումների դիվերսիֆիկացման չափումներ՝ ըստ սահմանահատողների նպատակների, սահմանից ներս և դուրս գտնվելու ժամկետների:	Տվյալների շահարկման նվազեցված հնարավորություններ	Ներքին գործերի նախարարություն Վիճակագրական կոմիտե
13.	Համապարփակ և համակողմանի հետազոտությունների բացակայություն	Միգրացիայի խնդրի քաղաքականության մշակման համար առանձին կարևոր ասպեկտներ (միգրանտների դրսում իրավունքների պաշտպանվածությունը, պետության կողմից նրանց հովանավորությունը դրսում, և այլն) չեն հետազոտվում:	Որակյալ մասնագետների սակավությունը Պետական և մասնավոր կազմակերպությունների կողմից հետազոտական պատվերների և ֆինանսավորման սակավությունը	Թեմայով մասնագետների պատրաստում և վերապատրաստում: Պոտենցիալ պատվիրատուների և ֆինանսավորողների շրջանում հետազոտության կարևորության մասին ջատագովում	Բուհական հաստատություններում պարբերական կուրսերի և բաժինների ստեղծում Ոչ ֆորմալ դասընթացների կազմակերպում	Որակյալ մասնագետների ապահովում Միգրացիայի հետազոտություններում դրա բոլոր ասպեկտների ներառում:	Ոլորտի ուսումնասիրողներ: Պոտենցիալ պատվիրատուներ
14.	Մեծ տվյալների բացակայություն	Միգրացիոն հետազոտությունները տարածաշրջանում դեռևս չեն իրականացվում ավելի նորարարական հետազոտական մեթոդաբանությունների հիման վրա:	Միգրացիայի վերաբերյալ մեծ տվյալների գեներացման և դրանց վերլուծությանն ուղղված նախաձեռնողականության բացակայություն:	Արտաքին և ներքին միգրացիոն հոսքերը վերահսկելու և կանխատեսելու նպատակով մեծ տվյալների կիրառություն[1]:	Լուծմանը, քայլին համարժեք գործիքակազմի կիրառում՝ հեռախոսային օպերատորների տվյալադարաններ, գուգլ տենդեցների վերլուծություն,Ֆեյսբուքյան և այլ սոցիալական հարթակների տվյալների կիրառում, բնակչության միացվածության ինդեքսի (Connectedness Index[2]) հաշվարկում, IP հասցեների ստուգում էլ. փոստերի միջոցով:	Միգրանտների տեղաշարժի մասին տվյալադարաների և կանխատեսման մոդելների առկայություն, ինչը թույլ կտա հավաքագրել հավելյալ տեղեկություն միգրացիոն հոսքերի մասին	Վիճակագրական կոմիտե Ներքին գործերի նախարարություն

1. https://data4migration.org/initiatives/
2. https://dataforgood.facebook.com/dfg/tools/social-connectedness-index

15.	Պետություն-ֆինանսավորող կազմակերպություն-հետազոտական համայնք համակողմանի համագործակցության բացակայություն	Պետու-թյան և միգրացիոն ուսումնասիրությունները ֆինանսավորող համայնքների առաջնահերթությունների քարտեզագրման բացակայություն, ինչը թույլ կտա ավելի հստակ պատկերացնել հնարավոր համագործակցությունը և դրա շրջանակները:	Շահառուների միջև երկխոսության և	Շահառու կողմերի համար մշտական պարբերականությամբ գործող քննարկման հարթակի ստեղծում: Հետազոտական և դոնորական համայնքին ուղղված հետազոտությունների պետական պատվերի իրականացման մոնիթորինգ և մասնակցություն՝ շահառու կառույցների կողմից	Պետություն-ֆինանսավորող կազմակերպություն-հետազոտական համայնք կապն ամրապնդող համատեղ իրականացվող ծրագրեր Հանդիպումների տարեկան քանակ Տարեկան 2 անգամ կայանալիք շահառու կողմերի համաժողով Հետազոտական արդյունքների պարբերական ներկայացում շահառու կառույցներին Անհրաժեշտ տվյալների հավաքագրում և վերլուծություն	Պետություն-ֆինանսավորող կազմակերպություն-հետազոտական համայնք շղթայի արդյունավետ և կայուն գործունակություն	Ներքին գործերի նախարարություն որպես նախաձեռնող